Հաստատված է
Պետության և իրավունքի
տեսության և սահմանադրական
իրավունքի ամբիոնի 31.08.2020թ.
նիստում (արձ. թիվ 1)
Ամբիոնի պետ՝ ................................
(ստորագրություն)
................................
(ամիս ամսաթիվ)

# ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
# ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

(Կազմվել է ուսումնական ծրագրի նախագծի հիման վրա)

| | | |
|---|---|---|
| ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ | | Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն 1 |
| | | |
| ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ | | |
| | | |
| ՖԱԿՈՒԼՏԵՏ | | Իրավագիտություն, վճարովի ուսուցում |
| | | |
| ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ | | Իրավագիտություն |
| | | |
| ԱՄԲԻՈՆ | | Պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոն<br>pitambion@mail.ru |
| | | |
| ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ | | Է.Չիբուխչյան<br>հեռ.099-20-20-81 |
| | | |
| ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ | | 1-ին կուրս, 1-ին կիսամյակ |
| | | |
| ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ | | բակալավր |

| | | |
|---|---|---|
| ԿՐԵԴԻՏՆԵՐ | | 2(երկու) |
| | | |
| ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ | | «Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն 1» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 60 ժամ, որից 18 ժամ դասախոսություն, 14 ժամ սեմինար, 28 ժամ ինքնուրույն աշխատանք: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը երկու լսարանային ժամ տևողությամբ: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում՝ ստուգարքով: |
| | | |

| | | |
|---|---|---|
| ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ | | Դասընթացը կառուցվում է հանրակրթական ավագ դպրոցում դասավանդվող «Հասարակագիտություն», «Համաշխարհային պատմություն» դասընթացների իմացության վրա: |
| | | |
| ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ | | «Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն 1» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են պետության և իրավունքի ֆենոմենը, դրանց ծագումը, հիմնական փուլերը, պատճառները և պայմանները,որոնք ազդել են դրանց ծագման, զարգացման, ձևի և բնույթի փոփոխության վրա, պետության, իրավունքի զարգացման հիմնահարցերը,որոնք ժառանգել են որոշակի աշխարհագրական տարածաշրջանի և պատմական ժամանակաշրջանի, մասնավորապես հին և միջին դարերի, պետականության առավել բնութագրական գծերը: |
| | | |
| ՆՊԱՏԱԿ<br><br>ԽՆԴԻՐ/ՆԵՐ | | Դասընթացի նպատակն է ուսանողներին մատուցել համապարփակ գիտելիքներ, մասնավորապես՝ ուսանողին սովորեցնել համաշխարհային պետաիրավական մշակույթում մեծ ներդրում կատարած հինագույն երկրների պետության և իրավունքի պատմությունը:<br><br>Դասընթացի խնդիրներն են՝<br>• մշակել իրավական մտածողություն, որն անհրաժեշտ է իրավունքի կիրառման համար,<br>• ստեղծել անհրաժեշտ նախադրյալներ պետության և իրավունքի պատմական տիպերի, աղբյուրների համակողմանի ընկալման համար,<br>• ներկայացնել պետության և իրավունքի ծագման,ձևավորման փուլերը, նրա առանձնահատուկ կարևորությունը հասարակության կյանքում,<br>• ցույց տալ պետության և իրավունքի՝ որպես համաշխարհային երևույթների զարգացման և դրանց տիպերի հերթափոխի առանձնահատկությունները: |
| | | |
| ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ | | 1) Տիրապետել աշխարհի պետաիրավական մշակույթում մեծ |

| | | |
|---|---|---|
| *1. Կարողանա՝* | | ներդրում կատարած, կարևոր քաղաքական նշանակություն ունե-ցած հին և միջին դարերի պետությունների պետաիրավական պատմությանը:<br>2) Ձեռք բերել արդի պետաիրավական իրականության բազ-մակողմանի ճանաչման հմտություն:<br>3) Տիրապետել իրավական հմտությանը, քաղաքական խորա-թափանցությանը: |

| | | |
|---|---|---|
| **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ** | | |
| | | |
| **Հիմնական** | | 1. Ամբիոնի կողմից մշակված դասախոսություններ:<br>2. Ա.Արշակյան «Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն» 2003թ. Երևան:<br>3. Ծ.Պետրոսյան «Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն» Երևան Եր.համալս.հրատ.1986թ.:<br>4. З.Черниловский «Всеобщая история государства и права» М.1996г. |
| | | |
| **Լրացուցիչ** | | 1.В.Графский «История государства и права» М.2003г.<br>2. С.Чибиряев «История государства и права зарубежных стран» М.2002 г. |
| | | |

| | | |
|---|---|---|
| **ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ** | | Ստուգարք («Ստուգված», «Չստուգված») |
| | | |
| **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ** | | Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100 % (ստուգված) առաջադիմություն:<br>Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված»:<br>Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝<br>ա) «Գերազանց», եթե ունկդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական , գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, չի դժվարանում պատասխանել, ընդունակ է ինքնուրույն |

| | |
|---|---|
| | ընդհանրացնել և շարադրել` սխալներ թույլ չտալով.<br>բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ,գրագետևըստէության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ.<br>գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը.<br>դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ: |
| | |
| **ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի ուսանողին: |
| | |
| **Ներկայություն** | Ուսանողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկնդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում: Ուսանողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին,բանավեճերին,անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը: |
| **Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ** | Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր: |
| **Ինքնուրույն և գործնական աշխատանքներ** | Ինքնուրույն աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը:Այլոց մտքերը օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի: |

## ԱՌԱՐԿԱՅԻ ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՅՈՒՄ

| **Թեմա 1<br>Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմության առարկան և հետազոտման մեթոդները<br>(2ժամ դասախոսություն, 2ժամ սեմինար)** | |
|---|---|
| **Թեմայի հարցերը** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմության ուսումնասիրման առարկան:<br>2. Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմության ուսումնասիրման մեթոդները: | Հարցեր 1-2- անցկացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով առանցքային հարցերի վրա:<br>Հարց 1 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը և առավել խորը ուսումնասիրում Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմության առարկան:<br>Հարցեր 1-2 – անցկացվում է սեմինար պարապմունք: Սովորողների հարցման, ինչպես նաև՝ խմբային քննարկման միջոցով կատարվում է դասավանդվածնյութի և ինքնուրույն աշխատանքի արդյունքների ամփոփում, պարզվում է դրանց յուրացման աստիճանը: |

| **Թեմա 2<br>Նախնադարյան համայնքների քայքայումը, պետության և իրավունքի առաջացումը<br>(2ժամ դասախոսություն, 2ժամ սեմինար)** | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1.Վայրենության և բարբարոսության ժամանակաշրջան-ներ:<br>2.Քաղաքակրթության ժամանակաշրջան: | Հարցեր 1-2-անցկացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով առանցքային հարցերի վրա:<br>Հարց 1 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը և առավել խորը ուսումնասիրում |

| | |
|---|---|
| | վայրենության և բարբարոսության ժամանակաշրջանների առանձնահատկությունները:<br>Հարցեր 1-2 - անցկացվում է սեմինար պարապմունք: Սովորողների հարցման, ինչպես նաև՝ խմբային քննարկման միջոցով կատարվում է դասավանդված նյութի և ինքնուրույն աշխատանքի արդյունքների ամփոփում, պարզվում է դրանց յուրացման աստիճանը: |

| **Թեմա 3**<br>**Պետությունը և իրավունքը հին Եգիպտոսում**<br>**(2ժամ դասախոսություն, 2ժամ սեմինար)** | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1.Պետության կազմավորումը և զարգացումը:<br>2.Հասարակական և պետական կարգը:<br>3.Իրավունքի աղբյուրները և բնորոշ գծերը: | Հարցեր 1-3-անցկացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով առանցքային հարցերի վրա:<br>Հարց 3 - ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը և առավել խորը ուսումնասիրում հին Եգիպտոսի ստրկատիրական պետության իրավունքի աղբյուրները և դրանց բնորոշ գծերը:<br>Հարցեր 1-3-անցկացվում է սեմինար պարապմունք: Սովորողների հարցման, ինչպես նաև՝ խմբային քննարկման միջոցով կատարվում է դասավանդված նյութի և ինքնուրույն աշխատանքի արդյունքների ամփոփում, պարզվում է դրանց յուրացման աստիճանը: |

**Թեմա 4**

| **Պետությունը և իրավունքը հին Բաբելոնում (2ժամ դասախոսություն, 2ժամ սեմինար)** | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1.Շումերների քաղաք-պետությունների առաջացումը: Ուռուկագինայի ռեֆորմները:<br>2.Բաբելոնի պետության առաջացումը, հասարակական և պետական կարգը:<br>3.Իրավունքի աղբյուրները և բնորոշ գծերը: | Հարցեր 1-3-անցկացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով առանցքային հարցերի վրա:<br>Հարց 3 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը և առավել խորը ուսումնասիրում հին Բաբելոնի իրավունքի աղբյուրները և դրանց բնորոշ գծերը:<br>Հարցեր 1-3-անցկացվում է սեմինար պարապմունք: Սովորողների հարցման, ինչպես նաև՝ խմբային քննարկման միջոցով կատարվում է դասավանդված նյութի և ինքնուրույն աշխատանքի արդյունքների ամփոփում, պարզվում է դրանց յուրացման աստիճանը: |

| **Թեմա 5<br>Պետությունը և իրավունքը հին Հնդկաստանում<br>(2ժամ դասախոսություն, 2ժամ սեմինար)** | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1.Տոհմատիրական կարգերի քայքայումը, պետության և իրավունքի առաջացումը հին Հնդկաստանում:<br>2.Հասարակական և պետական կարգը:<br>3. Իրավունքի աղբյուրները և բնորոշ գծերը: | Հարցեր 1-3-անցկացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով առանցքային հարցերի վրա:<br>Հարց 2 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը և առավել խորը ուսումնասիրում հին Հնդկաստանի հասարակական և պետական կարգը:<br>Հարցեր 1-3 -անցկացվում է |

| | |
|---|---|
| | սեմինար պարապմունք: Սովորողների հարցման, ինչպես նաև՝ խմբային քննարկման միջոցով կատարվում է դասավանդված նյութի և ինքնուրույն աշխատանքի արդյունքների ամփոփում, պարզվում է դրանց յուրացման աստիճանը: |

| **Թեմա 6**<br>**Պետությունը և իրավունքը հին Աթենքում և Սպարտայում**<br>**(2ժամ դասախոսություն, 2ժամ սեմինար)** | |
|---|---|
| **Թեմայի հարցերը** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1.Աթենքի ստրկատիրական պետության և իրավունքի առաջացումը:<br>2.Սոլոնի և Կլիսթենեսի ռեֆորմները:<br>3.Աթենքի հասարակական և պետական կարգը:<br>4.Աթենքի իրավունքը և բնորոշ գծերը:<br>5.Սպարտայի պետության և իրավունքի առաջացումը, հասարակական և պետական կարգը: | Հարցեր 1-5-անցկացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով առանցքային հարցերի վրա:<br>Հարց 2 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը և առավել խորը ուսումնասիրում Սոլոնի և Կլիսթենեսի ռեֆորմները, դրանց դերն ու նշանակությունը աթենական պետության համար:<br>Հարցեր 1-5-անցկացվում է սեմինար պարապմունք: Սովորողների հարցման, ինչպես նաև՝ խմբային քննարկման միջոցով կատարվում է դասավանդված նյութի և ինքնուրույն աշխատանքի արդյունքների ամփոփում, պարզվում է դրանց յուրացման աստիճանը: |

| **Թեմա 7**<br>**Պետությունը և իրավունքը հին Հռոմում**<br>**(2ժամ դասախոսություն, 2ժամ սեմինար)** |
|---|

| | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Հին Հռոմի պետության և իրավունքի առաջացումը, հռոմեական պետության և իրավունքի պարբերականացումը:<br>2. Սերվիոս Տուլոսի ռեֆորմները, դրանց հետևանքները և նշանակությունը:<br>3.Հասարակական կարգը հանրապետության շրջանում:<br>4.Պետական կարգը հանրապետության շրջանում:<br>5.Պետական կարգը կայսրության շրջանում (պրինցիպատ և դոմինատ):<br>6.Հռոմեական իրավունքի զարգացման փուլերը և բնորոշ գծերը: | Հարցեր 1-6-անցկացվում է դասախոսություն՝ սովորողների ուշա-դրությունը հրավիրելով առանցքային հարցերի վրա:<br>Հարց 6 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրակա-նությանը և առավել խորը ուսումնասիրում հռոմեական իրավունքի զարգացման փուլերը և բնորոշ գծերը:<br>Հարցեր 1-6-անցկացվում է սեմինար պարապ-մունք: Սովորողների հարցման, ինչպես նաև՝ խմբային քննարկման միջոցով կատարվում է դասավանդված նյութի և ինքնուրույն աշխա-տանքի արդյունքների ամփոփում, պարզվում է դրանց յուրացման աստիճանը: |

| **Թեմա 8<br>Պետության և իրավունքի առաջացումը ֆրանկների մոտ<br>(2ժամ դասախոսություն)** | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1.Պետության առաջացման ու զարգացման առանձնահատկությունները:<br>2.«Սալիական պրավդա»-ն՝ որպես ֆրանկների հասարակարգն ու-սումնասիրելու աղբյուր:<br>3. Ֆրանկական համայնքի ֆեոդալականացումը:<br>4.Կառլ Մարտելի ռեֆորմները, դրանց սոցիալական նախադրյալները և հետևանքները:<br>5.Ֆրանկների պետական կարգը: | Հարցեր 1-5-անցկացվում է դասախոսություն՝ սովորողների ուշա-դրությունը հրավիրելով առանցքային հարցերի վրա:<br>Հարց 2 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրակա-նությանը և առավել խորը ուսումնասիրում «Սալիական պրավդա»-ն՝ որպես ֆրանկների հասարակարգն ու-սումնասիրելու |

| | |
|---|---|
| | աղբյուր: |

| **Թեմա 9**<br>**Ֆեոդալական պետության և իրավունքի առաջացումը Ֆրանսիայում**<br>**(2 ժամ դասախոսություն)** | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1.Ֆեոդալական դասային միապետության կազմավորումը և հասարակական կարգը:<br>2.Լյուդովիկոս 9-րդի ռեֆորմները:<br>3. Դասային-ներկայացուցչական միապետության կազմավորումը: | Հարցեր 1-3-անցկացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով առանցքային հարցերի վրա:<br>Հարց 2 - ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը և առավել խորը ուսումնասիրում Լյուդովիկոս 9-րդի ռեֆորմները: |

## ՀԱՐՑԱՇԱՐ
## «Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն 1» դասընթացի ստուգարքի

1. ԱԵՊԻՊ-ի ուսումնասիրման առարկան
2. ԱԵՊԻՊԻ-ի ուսումնասիրման մեթոդները
3. Վայրենության և բարբարոսության ժամանակաշրջաններ
4. Քաղաքակրթության ժամանակաշրջան
5. Հին Եգիպտոսի ստրկատիրական պետության կազմավորումը և զարգացումը
6. Հին Եգիպտոսի ստրկատիրական պետության հասարակական և պետական կարգը
7. Հին Եգիպտոսի ստրկատիրական պետության իրավունքի աղբյուրները և բնորոշ գծերը
8. Շումերական քաղաք-պետությունների առաջացումը. Ուռուկագինայի ռեֆորմները
9. Բաբելոնի պետության առաջացումը, հասարակական և պետական կարգը
10. Բաբելոնի իրավունքի աղբյուրները և բնորոշ գծերը. Համմուրաբի արքայի օրենքները
11. Տոհմատիրական կարգերի քայքայումը, պետության առաջացումը հին Հնդկաստանում
12. Հին Հնդկաստանի հասարակական կարգը
13. Հին Հնդկաստանի պետական կարգը
14. Հին Հնդկաստանի իրավունքի աղբյուրներն ու բնորոշ գծերը. Մանուի օրենքները
15. Աթենքի ստրկատիրական պետության առաջացումը և հասարակական կարգը
16. Սոլոնի և Կլիսթենեսի ռեֆորմներն Աթենքում
17. Աթենքի պետական կարգը
18. Աթենքի իրավունքը և բնորոշ գծերը
19. Սպարտայի ստրկատիրական պետության առաջացումը և հասարակական կարգը
20. Սպարտայի պետական կարգը
21. Հին Հռոմի պետության և իրավունքի առաջացումը, պատմության պարբերականացումը
22. Սերվիոս Տուլիոսի ռեֆորմները հին Հռոմում, հետևանքները և նշանակությունը
23. Հին Հռոմի հասարակական կարգը հանրապետության շրջանում
24. Հին Հռոմի պետական կարգը հանրապետության շրջանում
25. Հռոմի պետական կարգը կայսրության շրջանում (պրինցիպատ և դոմինատ)
26. Հռոմեական իրավունքի զարգացման փուլերը և բնորոշ գծերը
27. Ֆրանկական պետության առաջացումը և զարգացման առանձնահատկությունները
28. «Սալիական Պրավդա»-ն՝ որպես ֆրանկների հասարակարգի ուսումնասիրման աղբյուր
29. Ֆրանկական համայնքի ֆեոդալականացումը
30. Կառլ Մարտելի ռեֆորմները, սոցիալական նախադրյալներն ու հետևանքները
31. Ֆրանկների պետական կարգը
32. Ֆեոդալական դասային միապետությունը Ֆրանսիայում և հասարակական կարգը
33. Լյուդովիկոս 9-րդի ռեֆորմները Ֆրանսիայում

34. Դասային-ներկայացուցչական միապետության կազմավորումը Ֆրանսիայում